Աչերս ըզքե՛զ տեսանէ եւ սրտիկս ըզքե՛զ կու սիրէ.
Երբ իմ սիրտս ըզքեզ սիրէ, քոյդ ինձ ի՞նչ պատճառ կու դընէ.
Շատ մարդ կայ հասրաթ, որ լեզուով հետ ինձ զըրուցէ:

Թ.

Ա՛յ գնա՛, չիպիտիս դուն ինձ , լուկ պեզար՝ իմ սիրտս ի քենէ.
Ձերայ խոցեցիր դուն զիս, լուկ վերցաւ սրտիկս ի քենէ.
Թէ գան ու զքեզ ջուր ասեն կամ ջուրին ճարակն ի քենէ,
Տարեկ մի ծարուած կենամ, չիխըմեմ կաթիկ մի քենէ:

Ժ.

Սուրաթդ ո՞ւմ սուրաթ նըման, Յովսեփայ որ զՄըսրայ տիրէ.
Հանցեղ էդ փարսի սուրաթ ի Պաղտատ քաղաքն եղել է.
Ստեղծօղն ի քեզ բարեխօ՛ս՝ որ սուրա՛թդ քեզ տըւել է,
Այն մանկանըն մի՛ նենգել որ սրտով ըզքեզ կու սիրէ:

ԺԱ.

Աղուո՛ր, զքեզ Աստուա՛ծ ստեղծել, մարդ օրհնեա՛լ որ զքեզ բերեր է.
Ո՛չ լուս կայ ի քեզ նըման, ո՛չ արեւ որ դեռ կու ծագէ.
Ձօհալ աստղիկ քեզ նըման, որ ամէն առաւօտ կ’ելնէ,
Կ’երթայ ի Հոռոմք ի վար, լուսն ու մութն ի հոն բաժանէ:

ԺԲ.

Աղուո՛ր, Աստուա՛ծ քեզ ստեղծել, մարդ օրհնեա՛լ որ զքեզ բերեր է:
Բանիկ մի խալատ ունիս, չես թողուր որ ըզքեզ պարգնէ:
Ձինչ աշխարհս երեէց յայտնել՝ ըզքո խրատ տըւողն անիծէ,
Որ քեզ խըրատ տըւել է՝ զքեզ յիսնէ կարօտ կու պահէ:

ԺԳ.

Աչերըդ դու հանց ունիս, աջն երէ՝ ձախըն խորովէ.
Ունքներըդ դու հանց ունիս որ Շիրազն ի հիմնէ քակէ.
Հալապ ու Դըմըշխ քաղաք՝ ով որ զքո ձայնըդ կու լըսէ,
Տըւել զարեւուն ըզթարկն՝ հասրաթով ըզքեզ կու տեսնէ:

ԺԴ.

Աչերըդ դու հանց ունիս, աջն երէ՝ ձախըն խորովէ.
Ունքներըդ դու հանց ունիս՝ հանց՝ զանձըս քեզ ծառայ գըրել է.
Դու ա՛ռ զհոգիս ու զմարմինս ’ւ ի դնչէդ պագիկ մի ծախէ.